ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՐԳՈ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐ. Լ. ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայերի կողմից քրիստոնեական կրոնը պետականորեն ազգային կրոն հռչակելու 1700-ամյակի (որը լրանում է 2001 թվականին) նշումը ոչ միայն Սուրբ Էջմիածին Մայր Աթոռի, այլև մեր անկախ պետության, նրա ժողովրդի և ողջ հայության գործն է:

Հիշյալ տարեթիվը հավերժացնելու համար Մայր Աթոռի գերագույն խորհուրդը որոշել է քաղաքամայր Երևանում կառուցել Մայր եկեղեցի ս. Գրիգոր Լուսավորիչ անունով: Նրա կառուցումը պետք է ավարտվի ամենաուշը 2001 թվականին, երբ էլ տեղի կունենա տաճարի օծումը:

Դեռևս 1989 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա հղացել էր եկեղեցին կառուցել հայ ճարտարապետության գլուխգործոցը հանդիսացող Զվարթնոցի օրինակով: Նրա հանձնարարությամբ Աթոռի ճարտարապետական խորհուրդը իր հատուկ նիստում քննության առնելով ճարտարապետ-գիտնական Թորոս Թորամանյանի Զվարթնոցի վերակազմությունը, որոշեց հավանություն տալ նախագծին, ավելացնելով արարողության պահանջները բավարարող սենյակներ, որը և իրականացվեց:

Հետագայում, եկեղեցական գործերի խորհրդի նախագահ (մինչ այդ ՀԿԿ Կենտկոմում աթեիզմի գործը ոգեշնչող) Ս. Վարդանյանի ջանքերով կաթողիկոսի որոշումը վերացվեց և հայտարարվեց նոր նախագծի ստեղծման մրցույթ երկամյա ժամկետով, ակնկալելով ունենալ առավել բարեմասնություններով օժտված նախագիծ:

Քանակական առումով հաջողած (33 նախագիծ) մրցույթի արդյունքում չկա մի նախագիծ, որը բոլոր առումներով համարվի ընդունելի և հանձնարարվի կառուցման համար:

Բանն այն է, որ ինչ-որ չափով հաջողած նախագծերը, որ այնուամենայնիվ գեղարվեստական արժեքով զիջում են Զվարթնոցին, այնպիսի չափերի են, որոնց իրականացման համար կպահանջվի առնվազն 15 տարի, մի քանի տասնյակ միլիոն ռուբլի: Ահավասիկ, եթե հայկական եկեղեցիներից ամենամեծի (36 մ տրամագծով և 45

մ բարձրությամբ)՝ Զվարթնոցի ծավալը հասնում է 30.000 խմ, ապա որոշ կարևոր նախագծերով այդ ծավալը հասնում է 90-130.000 խմ-ի (65-75 մ բարձրությամբ):

Պարզվում է, որ կորցնելով երկու անդառնալի տարիներ, մենք չունեցանք Զվարթնոցը գերազանցող ստեղծագործություն: Այսպիսով, ինչ որ ձևով արդեն ուրվագծվում են կաթողիկոսի առաջին և գեղեցիկ մտահղացման ձախողման նշաններ, որի համար, ափսոսելուց զատ, պետք է ձեռնարկել հավաստի միջոցներ դրությունը փրկելու համար:

Մայրաքաղաքի բնակիչների մոտ այս հարցի շուրջը առկա է լայն հետաքրքրություն: Տիրապետում է այն կարծիքը, որ պետք է վերադառնալ կաթողիկոսի սկզբնական մտահղացմանը, որ ս. Գրիգորը կառուցվի Զվարթնոցի օրինակով, մանավանդ որ նրա տարողությունը բավարարում է Մայր Աթոռի պահանջները:

Զվորթնոցը, որպես ճարտարապետական բարձրակարգ, ցարդ չգերազանցված ստեղծագործություն, համեմատաբար փոքրածավալ է և, որ շատ կարևոր է, այն ռացիոնալ է իր կառուցվածքային հորինվածքով. նրա կառուցումը կարող է իրականացվել մնացած 8-9 տարում: Այսպիսի գործընթացի դեպքում մենք իրականացված կտեսնենք մեր այսօրվա հայության ևս մի երազանքը՝ կանգուն տեսնել մեր անցյալի մեծագործության՝ Զվարթնոցի հոյակերտ պատկերը, ինչ ինքնին մեծ պատիվ է մեր ժողովրդի համար: Չէ որ Զվարթնոցը մեր անձնագիրն է, մեր այցետոմսը քաղաքակիրթ մարդկության ընդհանրական ընտանիքում, իսկ այսօր, ցավոք, այն գոյություն չունի:

Մեծարգո նախագահ, Ձեր բարի կամեցողությամբ, հուսով ենք, հնարավոր կդառնա վերացնել այն պատնեշը, որը արգելակում է մեր իմաստուն Վեհափառի առաջին որոշմանը վերադառնալուն: Այսպիսի արարքը կփառաբանվի դարերով հայ իրականության նոր ժամանակների և գալիք սերունդների կողմից:

Տիրան Մարության
ՀՀ վաստակավոր ճարտարապետ
Ճարտարապետության թեկնածու

2 մարտի 1992 թ.

(Երևան-9, Մոսկովյան 8, բն. 33, հեռ. 56-08-33)